բարց, որոց բաղումք արդէն քանիցս իւրեանց ունեցածները հրդեհից զոհ տալով, այս անդամ իւրեանց սիրելիները և ընտանիքները և բարեկամները ևս կորուսին. ամէն ՝ այ իւր աչքին առջև ներկայացնէ՝ այն ազետալի տեսարանը, ու տեսնայ որ իւր համազգի եղբարց ոմանք բոցակիզուած, ոմանք կազախառն՝ թանձրամած և բոցաբորբոք ծուխէն հեղձամղձուկ, ոմանք փլատակաց ներքև և ջրշեղ ջի ջրոց մէջ թաղուած վախճանեցան։ Եւ որք կենդանի մնացին, մերկ և կողոպուտ յամենայնէ նստեալ 'ի վերայ մոխրոց՝ և անբմբերելի արտասուաց և դառն ողբոց մէջ ընկղմած, ո՜հ՝ մի՞թէ մարդկային սրբտերը կը հանդուրժեն և անտարբեր կարեն մնալ այսպիսի՝ ցաւալի և բազմաղետ վրտանգելոց վիճակաց. յիշե՛նք՝ զի հրկիզելոց մեծ մասը մեր սիրելի՝ համարիւն և համասեռ եղբարքն են։ Մինչդեռ այլազգիք անդամ մարդասիրաբար զանազան նպաստներով և միջոցներով կը ջանան մխիթարել այն դժբաղդները, մի՞թէ կարելի է յուսալ՝ զի մեր Ռուսաստանաբնակ առատասիրտ՝ բարեգութ և ողորմած եղբարք և ազգակիցք անտարբեր աչք նկատեն Վ. Հ. Կաթողիկոսի հրաւէրները իւրեանց դժբաղդ և բազմաք վտանգեալ եղբարց դրամական օժանդակութիւն շնորհելոյ աղաղաւ։ Մեք անշո՛ւշտ եմք, զի եղբարք մեր որ 'ի Ռուսիա և ազգակիցք՝ ամենայն սիրով ընդունած 'Նորին Ս. Օծութեան հրաւէրները և յորդորները, պիտի սիրեն փութալ մի քան զմի առաւել բարի նախանձով լցեալ՝ կարեկցութեան և եղբայրսիրութեան սուրբ զգացմամբք և գեղեցիկ առաքինութեամբք վառուած՝ ըստ կարեաց օգնել և նպաստել այն Ներարնակ բազմաղետ և թշուառ ազգայնոցս. և այսպիսի՝ բարեգործութեամբք բազմաթիւ գերդաստաններ պիտի ազատուին թշուառութեան դառն կեանքերէն, և պիտի մխիթարուին նոքա ըստ հոգւոյ և ըստ մարմնոյ։

Ի ժամանակին՝ օժանդակողաց անուանք հանդերձ քանակութեամբք նպաստիցն պիտի հրատարակուին ամսագրոյս միջոցաւ։

ՀԱՐՑԱՔՆՆՈՒԹԻՒՆ

Ս. ԱԹՈՌՈՑՍ ԺԱՌԱՆԳԱՒՈՐԱՑ ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆԻ

Ամսոյս 7էն սկսեալ ց20ն՝ Մայր Աթոռոյս Ժառանգաւորաց ուսումնարանի աշակերտաց տարեկան հարցաքննութեան հանդէսը կատարուեցաւ 'ի ներկայութեան Գեր. Արքեպիսկոպոսաց՝ Արժ. Վարդապետաց և Միաբանից։

Ըստ բաւականին յաջող էին աշակերտաց պատասխանները դաս տուեալ զանազան առարկայից մէջ, և միանգամայն քննչաց գոհունակութեանց արժանի։

ՕՐԻՈՐԴԱՑ ՎԱՐԺԱՐԱՆ

Ի ՇԱՄԱԽԻ.

Գեր. Անդրէաս Արք. Եպիսկոպոս Հոգևոր – Տեսուչն Շամախւոյ՝ ըստ ուսումնասէր և բարենպաստակ զգացմանցն՝ նոյն քաղաքին Մերազնէից Օրիորդաց Վարժարանի համար ունեցած անհրաժեշտ կարօտութիւնը տեսանելով, ամէն ջանք 'ի գործ կը դնէ և ըստ բաղձանաց և ըստ բարձու հրամանի Վեհափառ Կաթուղիկոսի՝ կը յաջողի հաստատել Օրիորդաց Վարժարան։ Շամախաբնակ մերազ-